



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. /374010/ 287401, 2 25 22

<<03>> նոյեմբեր 2018թ. N ՉԲ/10/ՑԻԿՏ-18

Տարք /374010/ 28 18 32

<<ՎԵԼԵՍ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՆԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գյուրջյան

Ի պարասիան Ձեր 22.10.2018թ. հարցման՝ ներկայացնում ենք պահանջվող տեղեկատվությունն ըստ կետերի:

1. Մարզպետարանի աշխատակազմում ապահովված է արական և իգական սեռերի հավասար ներգրավվածությունը:

1.1. Մարզպետարանը չունի կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածությունն աշխատակազմում ապահովելու համար ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ:

1.2. Մարզպետարանի աշխատակիցների թիվը 2018թ. նոյեմբերի 1-ի դրությամբ կազմում է 92, որից 46-ը՝ կին, 46-ը՝ տղամարդ:

2. Սահմանափակ կարողություններով անձանց ներգրավվածությունը մարզպետարանի աշխատանքներում ապահովելու նպատակով շենքի առաջին հարկում կառուցվել է թերահարթակ:

2.1. Մարզպետարանը չունի սահմանափակ կարողություններով անձանց ներգրավվածության հնարավորությունն աշխատակազմում ապահովելու համար ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ:

2.2. Մարզպետարանի աշխատակազմում սահմանափակ ունակություններով անձանց ներգրավելու համար որևէ ծրագրի չի նախատեսվել:

2.3. Մարզպետարանում սահմանափակ կարողություններով անձինք չեն աշխատում:

3-րդ և 4-րդ կետերի վերաբերյալ ընդհանուր տեղեկացնում ենք, որ Վայոց ձորի մարզում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները փոքր թիվ են կազմում: Մարզպետարանում քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցվում են մրցույթի միջոցով, որը հավասար պայմաններ է սահմանում բոլոր մասնակիցների համար, եթե նրանք բավարարում են մրցույթի անցկացման համար սահմանված պահանջները:

Ինչ վերաբերվում է ազգությամբ հայ, սակայն այլ երկրի քաղաքացի հանդիսացող անձանց ներգրավվածությանը մարզպետարանի աշխատակազմում, ապա տեղեկացնում ենք, որ մարզպետարանի աշխատողները համարվում են պետական ծառայողներ, որոնց պաշտոնի նշանակման համար գոյություն ունեն որոշակի չափանիշներ, որոնցից մեկն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը: Իսկ տեխնիկական սպասարկում իրականացնելու համար երբևէ ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ կամ այլ երկրի քաղաքացիներ չեն դիմել:

 Invalid signature

X



VERIFIED OCSP 11/6/2018 15:34:37 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ

Signed by: SARGSYAN TRDAT 2901890687

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կայր՝ Ն. Մաղաքյան
Հեռ՝(0281) 2 55 95